Ժողովուրդ

Հասցեն՝ Երևան, Աբովյան 22ա/
Հեռ. /ֆաքս. +374 010 54 64 2
Կայք www. armlur.an
Էլ. փոստ info.armlur@gmail.con
info.zhoghovurd@gmail.con

ՀՀ Արմավիրի մարզպետ

Դավիթ Խուդաթյանին

լրագրող

Նանիկ Աղասյանից

Հարցում

Հարգելի՛ պարոն Խուդաթյան, համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ պատասխանել հետևյալ հարցերին՝

- 2023թ Արցախի հայաթափումից հետո քանի՞ բռնի տեղահանված է բնակություն հաստատել Արմավիրի մարզում:
- Ի՞նչ զբաղվածություն ունեն նրանք: Կարողացել են արդյոք աշխատանք գտնել և հատկապես ո՞ր ոլորտներում: Գո՞ւցե սեփական գործ են սկսել:
- Արդյո՞ք աջակցություններ ստանում են: Ի՞նչ տեսակի աջակցություններ են ստանում:
- Կա՞ն համայնքում բռնի տեղահանված անձինք, որ դեռ շարունակում են բնակվել սպորտդահլիճներում և հյուրատներում: Եթե կան, ապա խնդրում ենք նշել, թե ինչով է պայմանավորված, որ ամիսներ անց դեռ շարունակում են այդ պայմաններում ապրել:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) եւ հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

Կանխավ շնորհակալ եմ

23.02.2024